Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՅՈՒՄԸ ԵՎ ՎԱԽՃԱՆԸ

Մ.թ.ա. 3-րդ դարի կեսից Մեծ Հայքը լարված փոխհարաբերությունների մեջ էր իր հարևանների հետ: Նրան հյուսիսից սպառնում էին վրացա-սարմատական դաշնակից ուժերը հյուսիս-արևմուտքից՝ արևելապոնտական շրջանների ցեղերը, հարավ-արևելքից ու արևելքից՝ Ատրպատականի թագավորությունն ու նրան ենթակա ցեղերը, իսկ հարավից՝ Սելևկյան աշխարհակալությունը: Մեծ Հայքի վիճակը սկսեց բարդանալ, երբ Սելևկյան թագավորությունում գահ բարձրացավ Անտիոքոս 3-րդը (մ.թ.ա. 223-187թթ.): Նրա գործադրած ջանքերի հետևանքով Մեծ Հայքի գերիշխանությունից դուրս եկան Փոքր Հայքը, Ծոփքը և Կոմագենեն: Մեծ Հայքում գահ բարձրացած Երվանդ Վերջինը (մ.թ.ա. 222-201թթ.)[1] թույլ չէր տվել, որ Փոքր Հայքին անցնի նախկինում նրան պատկանած Սպերը՝ Բագրատունիների տիրույթը: Մովսես Խորենացու վկայությամբ, «բոլորը միաբանելով նրան թագավորեցրին, բայց առանց թագադիրի Բագրատունիների ցեղից»:[2] Ըստ երևույթին, Բագրատունիներն իրենց հույսը դրած են եղել Փոքր Հայքի անջատմանն օգնած Սելևկյան թագավորության վրա: Մեր պատմահայրը վկայում է, որ նրանք առաջինն էին անցել գահի հավակնորդ Արտաշիսի կողմը:

Թե ե՞րբ էր սկսվել Երվանդ-Արտաշես տոճակատումը, որը Անտիոքոս 3-րդի հրահրումով և միջամտությամբ վերածվելու էր պատերազմի, կարելի է ճշտել մեր պատմիչների հաղորդած տեղեկությունների և օտար հեղինակների վկայությունների համադրման միջոցով: Վերջիններիցս պարզվում է, որ Արտաշեսը՝ որպես Մեծ Հայքի սելևկյան ստրատեգոս, իշխանության գլուխ է անցել մ.թ.ա. 201թ., բայց թագավոր է դարձել մ.թ.ա. 189թ. և գահակալել մինչև մ.թ.ա. 160 թվականը: Անանուն պատմիչի համաձայն՝ նա թագավորել է 52 տարի, այսինքն՝ մ.թ.ա. 212-160թթ.:[3] Դա լինելու է Արտաշես 1-ինի օրոք ընդունված պաշտոնական տեսակետը: Իսկ ի՞նչ թվական է այդ մ.թ.ա. 212-ը: Անտիկ հեղինակների հաղորդումներից պարզվում է, որ հենց այդ թվականին էր Սելևկյան Անտիոքոս 3-րդը սկսել իր ռազմական ու դիվանագիտական միջոցառումները Հայաստանի դեմ՝ երկիրն իրեն ենթարկելու մտադրությամբ: Այս ժամանակ էլ Անտիոքոս 3-րդը ներխուժել էր Ծոփք: Ըստ Պոլիբիոսի՝ Ծոփքի Քսերքսես թագավորը «ուղարկեց դեսպաններ Անտիոքոսի մոտ և հայտնեց, որ ցանկանում է բանակցությունների մեջ մտնել նրա հետ... Նա վերցրեց Քսերքսեսից 300 տաղանդ, 1000 ձի և նույնքան ջորի իրենց լծասարքով, վերադարձրեց նրան ամբողջ իշխանությունը և ամուսնացրեց նրան իր Անտիոքիս քրոջ հետ»:[4] Այս քույրն էլ հետագայում կազմակերպեց Քսերքսեսի սպանությունը, որից հետո Ծոփքը վերածվեց սելևկյան ստրատեգիայի,[5] և այստեղ սարատեգոս կարգվեց Զարեհը:[6] Նույն մ.թ.ա. 212թ. Անտիոքոս 3-րդի հրահրումով Երվանդի դեմ ելել էր Արտաշեսը: Եթե Անանունը Արտաշեսին վերագրում է 52 տարվա՝ մ.թ.ա. 212-160թթ. գահակալում, ապա, ըստ Խորենացու, նրա գահատարիների թիվը 41 է,[7] այսինքն՝ Արտաշես 1-ինի գահատարիները եղել են մ.թ.ա. 201-160 թթ.: Ճիշտ 201թ.

---

[1] *Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանի (այսուհետև՝ Խորենացի), Եր., 1981, Բ, լէ-խգ: Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն Ստ.Մալխասեանց (այսուհետև՝ Սեբեոս), Եր., 1939, գլ. Բ, էջ 11:*

[2] *Խորենացի, Բ, լէ:*

[3] *Սեբեոս, գլ. Բ, էջ 11:*

[4] *Polybius, Historiae,1-6 Cambridge, Mass.-London, 1960 (The Loeb Classical Library),VIII, 25 (Հ.Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Եր., 1944, էջ 108):*

[5] *История древнего мира, II, Расцвет древних обществ, М., 1989, стр. 387.*

[6] *"The geography of Strabo, with an English transl. by H.L. Jones", vol. I-VIII, London, 1949-1954 (The Loeb Classical Library), XI, XIV, 15 (Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ.Աճառյան, Եր., 1940, էջ 65), Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 513, 693, 881:*

[7] *Խորենացի, Բ, կ:*

էր Արտաշեսը տապալել Երվանդին և որպես սելևկյան սատրապ սկսել էր իշխել Մեծ Հայքում: Ուրեմն, կասկած լինել չի կարող, որ Երվանդ-Արտաշես առճակատումը սկսվել էր մ.թ.ա. 212թ. և ավարտվել 201թ. Երվանդի սպանությամբ:

Սպերի Բագրատունիների և Տայքի բնակչության ավագանու հակաերվանդյան դիրքորոշման և Սելևկյան Անտիոքոս 3-րդի ու Հայոց գահի հավակնորդ Արտաշեսի կողմն անցած լինելու մասին է խոսում հետևյալ իրողությունը: Սպերը և Տայքը չէին ենթարկվել սելևկյանների հրահրումով Մեծ Հայք ներխուժած ցեղերի հարձակմանը և չէին գրավվել նրանց կողմից, երբ հարձակման ենթարկվել ու գրավվել էին նրանց հարևան շրջանները: Վերջիններիս թվում էին վրացիների գրաված «Պարիադրես լեռան ստորոտի գավառները» (հետագա Գողերձականը) և Խորզենեն (հետագա Արտահան գավառը և Կղարջքը), խալդիրների ու մոսինոյկների գրաված Կարենիտիսը և Դերքսենեն (հետագա Կարին և Դերջան գավառները) և կատաոնների գրաված Ակիլիսենեն (հետագա Եկեղիքը շրջակայքով):[8] Վրացիները գրավել էին նաև հայկական Գոգարենեն («Աշխարհացույցի» արևելյան Գուգարքը և Ջավախքը):[9]

Բագրատունի տոհմի հակաերվանդյան դիրքորոշումը ակնհայտ է արդեն նրանով, որ լինելով Հայոց թագադիրներ, Բագրատունիները չեն թագադրել Երվանդ Վերջինին՝ դրանով իսկ կասկածի տակ առնելով նրա թագավորության օրինականությունը: Դրա հաջորդ քայլը եղել է գահի հավակնորդ Արտաշեսի կողմն անցնելը: Ըստ Մովսես Խորենացու, «երբ Սմբատը՝ Բյուրատի որդին լսում է Սանատրուկի (մահվան) և նրա որդիների կոտորածի գույժը, առնում է իր երկու դուստրերին՝ Սմբատանույշին և Սմբատուհուն, տանում նստեցնում է Բայբերդում, քաջ մարդիկ ամրոցին պահապան դնելով, իսկ ինքն իր մի կնոջ և սակավաթիվ մարդկանց հետ գնում է մանուկ Արտաշեսին որոնելու»:[10] Այդ մասին հայտնի է դառնում Երվանդ արքային: Պատմահայրը ցույց է տալիս, թե ինչպես Երվանդ-Բագրատունիներ հակատությունը հետզհետե վերածվում է բացահայտ առճակատման: Նա գրում է. «Այն ժամանակ Երվանդը մարդիկ է ուղարկում և կոտորել է տալիս Բայբերդում (պահապան դրված) քաջերին, իսկ Սմբատի դուստրերին գերի բռնելով պահում է Անի ամրոցում ոչ վատ պայմաններում»:[11] Այս Անին Դարանաղի գավառի Անին լինել չէր կարող, որը Երվանդի հսկողությունից հեռու էր և ավելի մոտ էր Բագրատունիների Սպերին, քան Մեծ Հայքի միջուկը կազմող Այրարատին (հնարավոր է նույնիսկ, որ Փոքր Հայքի հետ միասին նախկինում նրան պատկանած Դարանաղին ևս արդեն դուրս էր գտնվում Մեծ Հայքի կազմից): Սմբատի դուստրերի արգելափակման վայր Անին լինելու էր Շիրակ գավառի Անին, որն անհամեմատ ավելի մոտ էր գտնվում Երվանդի մայրաքաղաք Երվանդաշատին, քան Բագրատունիների տիրույթ Սպերին: Ըստ այսմ, Երվանդի համար դժվարություն չէր կարող ներկայացնել Սմբատի դուստրերի վրա հսկողություն սահմանելը:

Բերված դրվագներից պարզվում է, որ մ.թ.ա. 212թ. սկսված հակամարտության առաջին փուլն ավարտվել է Երվանդ Վերջինի օգտին: Արտաշեսը և Սմբատ Բագրատունին այնուհետև լքել էին Հայաստանի սահմանները և ապաստան գտել Սելևկյան Անտիոքոս 3-րդի մոտ: Այս դեպքերին հաջորդած ժամանակաշրջանին պետք է վերաբերի հյուսիսում՝ վրացա-սարմատական ուժերի դեմ, Երվանդ Վերջինի ունեցած հաջողությունները: «Քարթլիս ցխովրեբան» («Վրաց պատմությունը») տեղեկություններ է պահպանել այն մասին, թե ինչպես Հայոց Իարվանդ (Երվանդ) թագավորը «գրավեց Քարթլիի (Վիրքի-Լ.Պ) սահմանները՝ քաղաք Ծունդան և Արտահանը (Արտանը) մինչև Կուրը, և բնակեցրեց Ծունդայում գազանաբարո մարդիկ՝ դևերին ազգակից, և կոչեց Ծունդան (նոր) անունով Քաջատուն, որ թարգմանաբար նշանակում է «Դևերի տուն»:[12] Նախ, Երվանդ Վերջինը Վիրքից չէր գրավել Ծունդայի և Արտահանի շրջանները: Դրանք հայկական տարածքներ էին՝ ժամանակավորապես զբաղեցրած վրացա-սար-

---

[8] *Strabo, XI, XIV, 5; XI, 12, 3; XI, 14, 2; XII, 3, 28 (Սաբարոն, էջ 57, 43, 55, 75), ՀԺՊ, հ. I, էջ 532, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 54-55.*

[9] *Strabo XI, XIV, 5 (Սաբարոն, էջ 57), Ա.Սելքոնյան, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 37-38:*

[10] *Խորենացի, Բ, լէ:*

[11] *Նույն տեղում, Բ, լը:*

[12] *Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ.I, Եր.,1934, էջ 155:*

մատական դաշնակից ուժերի կողմից: Խոսքը Ջավախք (Ծունդա-Քաջատունով) և Արտահան (նույնանուն քաղաքով) գավառների մասին է, որտեղից Երվանդը դուրս էր մղել թշնամական ուժերին: Ծունդա բնակավայրի մոտ Երվանդի կառուցած Քաջատուն ամրոցը Մեծ Հայքի համար հենակետ էր ծառայելու Վիրքի և նրա հյուսիսկովկասյան դաշնակիցների դեմ:[13] Այն գտնվում էր ներկայիս Ախալքալաքի մոտերքում, իսկ, ինչպես կարելի է կռահել *Քաջատուն* անունը կրկնող իր *Քաջաց քաղաք* (վրաց. *Քաջթա-քալաքի*) անունից, Արտահան գավառում գտնված անվանակիր ամրոցը[14] ևս կառուցած էր լինելու Երվանդ Վերջինը, Արտահան գավառի ազատագրումից հետո: Այդ ամրոցը ևս հենակետ էր ծառայելու Վիրքի և նրա հյուսիսկովկասյան դաշնակիցների դեմ: Իսկ որ Քաջաց քաղաքը ամրոց է եղել, ցույց է տալիս նրա անվան *քաղաք* բաղադրիչը, որովհետև «քաղաք» նշանակող բառերը, ինչպես Հ.Աճառյանն է գրում, բուն «բարձունք կամ ամրություն» նշանակությունն ունեն:[15] Իսկ դրանք խոսում են այս ամրոցների «անմիջական արքունիքի վերահսկողության տակ անցնելու և այնտեղ արքունական կայազոր հաստատելու մասին»:[16] Ըստ երևույթին, Կուր գետի վերնագավառի այս և այլ շրջանների հետ կապված հարցերը վերջնականապես լուծելու համար էր, որ Երվանդ Վերջինը ձմեռում էր ոչ թե Արարատյան դաշտում, այլ Կուրի աջափնյա Ուտիք գավառում: «Վրաց պատմությունը» («Քարթլիս ցխովրեբա») նրան Արտաշեսի եղբայրը, ուրեմն, նաև ժամանակակիցն է համարում:[17] Ընդ որում, Երվանդ Վերջինին Արտաշեսի՝ պատմական Արտաշես 1-ինի եղբայրն է համարում նաև մեր Անանուն պատմիչը:[18] Ուրեմն, կասկած լինել չի կարող, որ Քաջատունը, ինչպես նաև Քաջաց քաղաքը հիմնադրել է Երվանդ Վերջինը:

Նույն այդ ժամանակաշրջանում՝ մինչև մ.թ.ա. 201թվականը, Սելևկյան Անտիոքոս 3-րդը Փոքր Հայքը, Կոմագենեն և Ծոփքը հասցրել էր նախ հպատակեցնել, ապա վերջինիս վերածել սելևկյան ստրատեգիայի: Դա տեղի էր ունեցել այն բանից հետո, երբ Անտիոքոսի արևելյան արշավանքների հետևանքով Սելևկյան այս թագավորի գերիշխանությունն էին ընդունել Ատրպատականն ու Պարթևական թագավորությունը և նա հաղթանակով էր ավարտել պատերազմը Եգիպտոսի Պտղոմեյան թագավորության դեմ:[19] Այժմ հասել էր Մեծ Հայքի հերթը:

Մովսես Խորենացու շարադրմամբ Երվանդ-Արտաշես հակամարտության երկրորդ փուլն սկսվել էր հետևյալ կերպ: «Երբ մանուկ Արտաշեսը զարգացավ... Արքայից արքան համաձայնելով՝ Սմբատի ձեռքն է տալիս մի մասը Ասորեստանի զորքերից և Ատրպատականի զորքերը, որպեսզի Արտաշեսին տանեն ու հայրենական գահի վրա հաստատեն»:[20] Խորենացին այդ գործողությունը և «արքայից արքա» տիտղոսը Պարսից թագավորին է վերագրում՝ ելնելով իր մշակած ժամանակագրությունից: Իրականում դա եղել է Անտիոքոս 3-րդը: Ի դեպ, Արևելքի երկրների հին միապետների մեծադղորդ տիտղոսները սելևկյանները սկսել էին գործածել Անտիոքոս 1-ինից սկսած, որը մ.թ.ա. 268թ. թվագրվող սեպագիր մի տեքստում կոչվում է «թագավոր հզոր, թագավոր աշխարհի, թագավոր Բաբելոնի, թագավոր երկրների»:[21] Այնպես որ «արքայից արքա» տիտղոսը կարող էր վերաբերել Անտիոքոս 3-րդին, որը նաև այդ տիտղոսը կրած Աքեմենյան արքաների բուն երկրի՝ Պարսքի տերն էր: Նրա տրամադրած «Ասորեստանի զորքերը» ներկայացնելու էին սելևկյան զորամասերը, որովհետև Միջագետքը Սելևկոս 1-ինից սկսած նրա ստեղծած թագավորության կենտրոնական երկրամասն

---

[13] *Լ.Պետրոսյան, Երվանդ Վերջինի ռազմական բնույթի շինարարության մասին, ԳԱՍ ՀՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VI, Գյումրի, 2003, էջ 65-71:*
[14] *Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Եր., 1963, էջ 89:*
[15] *Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1979, էջ 17:*
[16] *Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի, «Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ», 1977, թիվ 2, էջ 182:*
[17] *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Եր., 1981, էջ 212:*
[18] *Անանուն, գլ. Բ, էջ 11:*
[19] *История древнего мира. Расцвет древних обществ, т. II, стр. 387.*
[20] *Խորենացի, Բ, խզ:*
[21] *Э.Бикерман, Государство Селевкидов, М., 1985, стр. 8, пр. 26.*

էր (Սելևկոս 1-ինը կրում էր «բաբելոնցիների թագավոր» տիտղոսը):[22] Իսկ «Ատրպատականի զորքերը» կարող էին լինել Անտիոքոս 3-րդի գերիշխանությունն ընդունած Ատրպատականի զորամասերը: «Երվանդի իշխանությունը հաստատուն չէր: Խորենացին լավ է պատկերում այն շիկացած մթնոլորտը, որի մեջ թագավորը բոլորից իր վերջին տարիները: Երվանդը վախենում էր իր շրջապատից, ինչպես նաև ժողովրդից... Դժգոհություն էր տիրում երկրի մեծամեծների, նախարարների մեջ: Մյուս կողմից, ելնելով Արմավիրի արձանագրությունների տվյալներից, Արմավիր քաղաքը, նրա քաղաքացիների կոլեկտիվը՝ հանձին իր քրմապետի, բարեմաղթություններ էր անում թագավորին, դրանով գուցե արտահայտելով իր նվիրվածությունը նրան»,- գրում է Գ.Տիրացյանը, ավելացնելով. «Այս պայմաններում է, որ սկսվեց Արտաշեսի պատերազմը Երվանդի դեմ»:[23]

Դարձյալ լսենք Մովսես Խորենացուն: «Երվանդին Ուտեացոց գավառում լուր է հասնում, թե Պարսից թագավորը մեծ զորք գումարեց Սմբատի ձեռքի տակ, որպեսզի քեզ վրա գա և մանուկ Արտաշեսին իր թագավորությունը բերի: Երվանդը այս լսելով՝ այդ տեղում կողմնապահների է թողնում նախարարներից շատերին և ինքն շտապով գալիս է իր քաղաքը»:[24] Ապա՝ «Իսկ Սմբատը մանուկ Արտաշեսի հետ շտապում էր հասնել Ուտեացոց սահմանները: Այնտեղ նրան ընդառաջ եկան այն կողմի զորքերը, նաև այն նախարարները, որոնց Երվանդը թողել էր այնտեղ: Այս լսելով՝ Հայոց մյուս նախարարներն էլ լքվում, քայքայվում էին և մտածում էին Երվանդից բաժանվել»:[25] «Սմբատը մանուկ Արտաշեսի հետ բարձրանում է Գեղամա ծովի ափը, Արագած լեռան թիկունքում. նրանք շտապում էին հասնել Երվանդի բանակին»:[26] Շիրակում՝ Երվանդաշատ մայրաքաղաքից երեք հարյուր ասպարեզ հյուսիս, Ախուրյանի ափին գտնվում էր Երվանդ արքայի բանակատեղին: Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության տպագիր տեքստում Երվանդաշատի և Երվանդի բանակատեղիի միջև եղած հեռավորությունը ցույց է տրված «ավելի քան *հարյուր* ասպարեզ»,[27] երբ գրաբար տեքստում «ավելի քան *երեք հարիւր* ասպարիսաւ» է:[28] Գ.Սարգսյանը ճշտում է բանակատեղիի հեռավորությունը. «Երվանդաշատից մոտ 300 ասպարեզ (=շուրջ 50կմ) դեպի հյուսիս, Ախուրյան գետի ափին»:[29] Բանակատեղին կոչվում էր *Երվանդավան*: Նրա մոտ է տեղի ունեցել մ.թ.ա. 201թ. ճակատամարտը Հայոց թագավոր Երվանդ Վերջինի և գահի հավակնորդ Արտաշեսի բանակների միջև:

Մովսես Խորենացին Երվանդավանի անվանակոչությունը բացատրում է Արտաշեսի զորքի կողմից Երվանդին այդ վայրից *վանելու* հանգամանքով:[30] Բայց, ինչպես Գ.Սարգսյանն է ցույց տվել, բնակավայրը *Երուանդաւան* կոչվել է ավելի վաղ և կազմված է *Երուանդ* անվանը *աւան* բառի հավելումով. հմմտ. *Տիգրանաւան, Վարդգէսաւան, Արշակաւան*:[31] Ճիշտ է, բնակավայրը հետագայում *Երուանդաւան* անվամբ չի հիշատակվում, բայց Ս.Պետրոսյանի կարծիքով, դա նույն Անին է՝ Շիրակում, Ախուրյան գետի աջ ափին, Երվանդաշատի ավերակներից մոտավորապես նշված հեռավորության վրա:[32] Երվանդավանի ռազմավարական նշանակությամբ կարևոր բնակավայր լինելը երևում է թեկուզև նրանից, որ Երվանդավանի ու Երվանդաշատի միջև գո-

---

[22] *Э. Бикерман, նշվ. աշխ., էջ 8, պր. 26:*
[23] *ՀԺՊ, հ. I, էջ 515:*
[24] *Խորենացի, Բ, խդ:*
[25] *Նույն տեղում, Բ, խե:*
[26] *Նույն տեղում, Բ, խզ:*
[27] *Նույն տեղում էջ 203:*
[28] *Նույն տեղում, էջ 202:*
[29] *Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մ. Խորենացին, Եր., էջ 219:*
[30] *Խորենացի, Բ, խզ:*
[31] *Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 217:*
[32] *Ս. Պետրոսյան, Եռյակ բնակավայրերի համակարգը Ախուրյանի ավազանում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. V, Գյումրի, 2002, էջ 9: Նույն կերպ Երվանդակերտը հետագայում հայտնի էր Սարմէտ անունով (նույն տեղում, էջ 10): Դա եղել էր «փոփոխորեն Արտաշեսի կամքով, որ Երվանդի անունը նրա վրայից վերանա» (Խորենացի, Բ, խզ):*

յությունն ուներ մի շարք ճանապարհային կայաններով օժտված բանուկ ճանապարհ:[33] Անիի հին պարսպի առնչությամբ, Երվանդունի թագավորների այստեղ ծավալած պաշտպանական բնույթի շինարարական աշխատանքների վերաբերյալ Հ. Մանանդյանը գրում է. «...վերաբերում է, ըստ երևույթին, հայկական ճարտարապետության Երվանդյան ժամանակաշրջանին... Բացի Երվանդաշատից, Երվանդակերտից և Արմավիրից, նույն այս հնագույն ժամանակաշրջանի ամրացված կենտրոնավայրեր են եղել նաև Գառնին և Անին»:[34]

Մ. Խորենացու շարադրմամբ, մ.թ.ա. 201թ. Երվանդավանի ճակատամարտն ընթացել է հետևյալ կերպ: «Երբ Արտաշեսի նշանները Երվանդի զորքի ճակատի առաջ երևացին, Արգամը հետևակների բազմությունն առավ ու մի կողմ քաշվեց: Իսկ Սմբատը հրամայեց պղնձե փողերը հնչեցնել և իր զորքի ճակատն առաջ շարժելով, սլանում էր ինչպես արծիվը կաքավների երամի վրա: Իսկ հայոց նախարարները, որոնք (Երվանդի ճակատի) աջ և ձախ թևերն էին կազմում, խառնվում միանում են նրա հետ... (Երվանդի) մնացած զորքերը փախուստի են դիմում: Իսկ Երվանդը ձիով շատ ասպարեզներ անցնելով և իր բանակից (Երվանդավանից-Լ.Պ.) մինչև քաղաքը (Երվանդաշատը-Լ.Պ.) հաստատած իջևաններում նոր-նոր ձիեր հեծնելով, փախչում է անընդհատաբար»:[35]

Արգամը, ըստ Խորենացու, թագավորության «երկրորդական գահն» զբաղեցրած պաշտոնյան էր,[36] և առաջիկա ճակատամարտում նա էր առաջնորդելու Երվանդի հետևակազորը:[37] Բայց հեռատես Արտաշեսը կարողացել էր չեզոքացնել նրան, որովհետև ճակատամարտից առաջ «պատգամ էր ուղարկում հաստատուն երդումներով, որ կթողնի նրան, ինչ որ նա ստացել էր Երվանդից, և էլի ուրիշ բաներ կավելացնի, միայն թե նա Երվանդին թողնի, մի կողմ քաշվի»:[38] Արգամի պատմական անձնավորությունը լինելու վերաբերյալ Գ.Սարգսյանը գրում է. «Արգամի կերպարը գալիս է, անձամբ իր (և ոչ Արգավանի) հետ կապված դրվագների հետ միասին, Խորենացու հիմնական գրավոր աղբյուրից, որպես Երվանդյանների բարձր պաշտոնյա, հետագայում անցած գահի հավակնորդի կողմը»:[39] Հենց նա էլ եղել է Երվանդավանի ճակատամարտում Երվանդ թագավորի պարտության գլխավոր պատճառը, որովհետև թագավորին, փաստորեն, առանց հետևակազորի էր թողել:

Եթե Երվանդավանի ճակատամարտից առաջ Սելևկյանների և Արտաշեսի ջանքերով Երվանդ Վերջինը մեկուսացվել էր միայն արտաքին աշխարհից, ապա ճակատամարտից հետո մեկուսացումը դարձել էր բացարձակ: Ճիշտ է, թագավորը դեռևս հույսեր էր կապում Երվանդաշատի միջնաբերդի անառիկության և նրա կայազորի արիության հետ, բայց շուտով պարզվեց, որ դրանք զուր հույսեր էին: Երվանդաշատի գրավման նկարագրությունն ավարտվում է այս կերպ. «Եվ երբ քաջերն սկսեցին ամրոցի դեմ կռվել՝ ամրոցի մարդիկ անձնատուր եղան և քաղաքի դուռը բացին: Զինվորներից մեկը մտնելով՝ վաղրով Երվանդի գլխին խփեց... այսպես ջախջախվելով վախճանվեց քսան տարի թագավորելուց հետո: Բայց Արտաշեսը հիշելով, թե Երվանդը Արշակունյաց (թագավորական – Լ.Պ.) ցեղի խառնուրդ էր, հրամայում է թաղել և մահարձան դնել»:[40] Ըստ «Քարթլիս ցխովրեբայի», Երվանդ արքային սպանել էր Սմբատ Բիվրատիանը՝ Սմբատ Բյուրատյան Բագրատունին:[41] Երվանդի սպանությունից հետո միայն Երվանդաշատ մտած Արտաշեսը, երբ Երվանդի համար արքայավայել թաղում էր կազմակերպում և անգամ մահարձան կանգնեցնում, դրանով սոսկ հարգանքի տուրք չէր մատուցում իր ազգական թագավորին: Դրանով նա ավելի շատ ուզում էր

---

[33] *Խորենացի, Բ, խզ:*
[34] *Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 33-34:*
[35] *Խորենացի, Բ, խզ:*
[36] *Նույն տեղում, Բ, խդ:*
[37] *Նույն տեղում, Բ, խդ, Բ, խզ:*
[38] *Նույն տեղում, Բ, խզ:*
[39] *Նույն տեղում, էջ 161:*
[40] *Նույն տեղում, Բ, խզ:*
[41] *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 212:*

ցույց տալ, որ իր մտադրությունը Երվանդին սպանելը չի եղել, այլ գահընկեց անելը: Միևնույն ժամանակ դա նշանակում էր, որ նախկին թագավորի երկու ամենաբարձր պաշտոնյաները՝ քրմապետ Երվազը և «երկրորդական գահի» տեր՝ Արգամը, կարող էին անհոգ լինել՝ իրենց անձի նկատմամբ որևէ ոտնձգություն չի լինելու, իրենք կարող են շարունակել իրենց գործունեությունը (շարունակեցին մինչև Արտաշեսի հրամանով և գիտությամբ սպանվելը):

ПОЛИТИЧЕСКАЯ ИЗОЛЯЦИЯ И КОНЧИНА ЕРВАНДА ПОСЛЕДНЕГО

Резюме — *Л. Петросян*

При Ерванде Последнем (222-201гг. до н.э.) селевкидско-армянские отношения стали в высшей степени напряженными. Участились набеги союзников Селевкида Антиоха III - иберов и северокавказских племен, атропатенцев и их вассалов-союзников, на пограничные районы Армении. Одновременно Арташес-претендент на царский трон-при помощи Антиоха III начал войну против царя Ерванда. Решающее сражение произошло в 201г. до н.э. в гаваре Ширак у Ервандавана, на расстоянии трехсот стадии (аспарез) к северу от столичного города Ервандашата. Во время битвы многие из воинов царя либо бежали, либо присоединились к противнику. Армия царя потерпела поражение. Ерванд Последний бежал в Ервандашат, где и был убит.